Հավելված 1
Հաստատված է
«Այդի Բանկ» ՓԲԸ վարչության
10 հուլիսի 2025 թվականի N 287-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2025 թվականի հուլիսի 21-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:
Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:
Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33, 060 27 33 33 հեռախոսահամարներով:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ ՌԵԶԻԴԵՆՏ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ, ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ[1]

<table>
<tr><td colspan="4">1. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ[2]</td></tr>
<tr><td colspan="2" rowspan="2">ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ</td><td colspan="2">ՍԱԿԱԳԻՆԸ</td></tr>
<tr><td colspan="2">ՀՀ ԴՐԱՄ</td></tr>
<tr><td rowspan="2">1.1</td><td rowspan="2">Հաշվի բացում
(յուրաքանչյուր հաշվի համար)</td><td>Բանկի տարածքում</td><td>3,000</td></tr>
<tr><td>IDBusiness.am առցանց հարթակով</td><td>Անվճար</td></tr>
<tr><td>1.2</td><td>Հաշվի վերաբացում
(յուրաքանչյուր հաշվի համար)</td><td colspan="2">3,000</td></tr>
<tr><td rowspan="2">1.3</td><td>Հաշվի ամսական սպասարկում[3]</td><td colspan="2">Անվճար</td></tr>
<tr><td>Ոչ ակտիվ հաճախորդների հաշիվների տարեկան սպասարկում[4]
(բոլոր հաշիվների համար միասին)</td><td colspan="2">5000</td></tr>
<tr><td>1.4</td><td>Հաշվի փակում[5]</td><td colspan="2">Անվճար</td></tr>
<tr><td>1.5</td><td>Հաշվի չնվազող մնացորդ</td><td colspan="2">չի սահմանվում</td></tr>
<tr><td>1.6</td><td colspan="3">Դրամական միջոցների մուտքագրում հաշիվներին[6]</td></tr>
</table>

[1] **Սույն սակագները չեն կիրառվում ստորև նշված նկարագրին համապատասխանող Բանկի հաճախորդների համար՝**
ա) ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալում գումարային 50 տոկոս և ավելի մասնակցություն ունեն՝
✓ **օտարերկրյա քաղաքացիները, և/կամ**
✓ **ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, և/կամ**
✓ **ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձը, որի կանոնադրական կապիտալում գումարային 50 տոկոս և ավելի մասնակցություն ունեն օտարերկրյա քաղաքացիներ կամ ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք:**
բ) օտարերկրյա քաղաքացի հանդիսացող ՀՀ-ում գրանցված Անհատ ձեռնարկատիրոջ համար,
Ուշադրություն. Եթե Հաճախորդի բանկային հաշվի պայմանագրի գործողության ընթացքում փոփոխվում է հաճախորդի նկարագիրը և հաճախորդը համապատասխանում է վերը նշված նկարագրին, ապա Հաճախորդի վրա տարածվում են Տեղեկատվական ամփոփագրով սահմանված պայմանները, այն օրվանից, երբ Բանկին հայտնի է դառնում փոփոխության մասին:

[2] Սույն գլխի 1.1-1.5 կետերով նախատեսված սակագները չեն կիրառվում քարտային հաշիվների դեպքում, բացառությամբ Ոչ ակտիվ հաճախորդների հաշիվների համար սահմանված պահանջների:

[3] Սակագնի կիրառման կարգը տե՛ս՝ Ընդհանուր դրույթներ՝ կետ 1-ին:

[4] Ոչ ակտիվ հաճախորդների հաշիվների նկարագիրը և սակագնի կիրառման կարգը սահմանված է Բանկային հաշիվների բացման և սպասարկման կանոններով:

[5] Բանկային հաշիվների բացման և սպասարկման կանոններով կարող են նախատեսվել բանկային հաշվի փակման միջնորդավճարներ՝ կախված բանկային հաշվի փակման պատճառներից:

[6] Գործարքի նախապայմանների և նպատակի հնարավորին չափ մանրամասն ուսումնասիրելու (Due diligence) անհրաժեշտություն առաջանալու դեպքում սակագները/միջնորդավճարները կարող են սահմանվել պայմանագրային հիմունքներով:

1.6.1	Բանկի կողմից կանխիկով/անկանխիկով ընդունվող և գնանշված արժույթների համար	Համաձայն հղման
1.7	**Կանխիկ դրամական միջոցների տրամադրում/ելքագրում հաշվից**[6]	
1.7.1	Հաճախորդի հաշիվներին կանխիկ, անկանխիկ և տարանցիկ հաշիվներին մուտքագրված գումարի սահմաններում՝ ՀՀ դրամով կամ կանխիկով ընդունվող և գնանշված արտարժույթով	Համաձայն հղման
1.8	Հեռավար սպասարկման համակարգերում ձևավորվող քաղվածքների, վճարային փաստաթղթերի տրամադրում	անվճար
1.9	**Քաղվածքների (1 հաշվի համար) տրամադրում**[7]	
1.9.1	ՀՀ օրենսդրությամբ նախատեսված (առնվազն 30-օրյա պարբերականությամբ տրամադրվող) քաղվածքների դեպքում	անվճար
1.9.2	Մինչև 1 տարին ներառյալ վաղեմության ժամկետով տրամադրվող յուրաքանչյուր քաղվածքի դեպքում	500
1.9.3	1 տարուց ավելի վաղեմության ժամկետով տրամադրվող յուրաքանչյուր քաղվածքի դեպքում	1,000
1.10	**Փաստաթղթերի և պայմանագրերի** (1 **փաստաթղթի համար**) **տրամադրում**[7]	
1.10.1	Յուրաքանչյուր գործարքից հետո առաջին անգամ, բացառությամբ՝ Հեռավար սպասարկման համակարգերով ձևակերպված գործարքների համար	Անվճար
1.10.2	Մինչև 1 տարին ներառյալ վաղեմության ժամկետով տրամադրվող յուրաքանչյուր փաստաթղթի դեպքում, այդ թվում՝ Հեռավար սպասարկման համակարգերով ձևակերպված գործարքների համար	2000
1.10.3	1 տարուց ավելի վաղեմության ժամկետով տրամադրվող յուրաքանչյուր փաստաթղթի դեպքում, այդ թվում՝ Հեռավար սպասարկման համակարգերով ձևակերպված գործարքների համար	5,000
1.11	**Դիմումի համաձայն ՀՀ դրամով և/կամ արտարժույթով հաշվի առկայության, մնացորդի, շարժի, վերաբերյալ տեղեկանքների տրամադրում**[7]	
1.11.1	Հայերենով	3,000
1.11.2	երկլեզու (օրինակ՝ հայերեն – ռուսերեն կամ հայերեն - անգլերեն)	5,000
1.11.3	Պարտավորությունների վերաբերյալ	1,000
1.12	Այլ տեղեկանքների տրամադրում	5,000
1.13	Աուդիտորական հարցման պատասխանների պատրաստում	10,000
1.14	Ընթացիկ բանկային հաշիվների համար տարեկան տոկոսադրույք	0%

[7] Փաստաթղթերի տրամադրումը թղթային եղանակով ՀՀ-ում՝ Բանկի տարածքից դուրս կամ ՀՀ տարածքից դուրս իրականացվում է Հաճախորդի հաշիվներին փոստային ծառայության և սույն սակագներով տվյալ ծառայության մատուցման համար սահմանված միջնորդավճարների հանրագումարի առկայության դեպքում:

		(տարեկան տոկոսային եկամտաբերությունը հավասար է 0%)[8]
1.15	Բանկի կողմից Բանկի տարածքում լիազորագրի պատրաստում	5,000

2.	ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ[6; 9]		
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ		**ՍԱԿԱԳԻՆԸ ՀՀ ԴՐԱՄ**	
2.1	**Փոխանցումներ ՀՀ տարածքում**		
		Վճարման հանձնարարականի ներկայացման եղանակ	
		Վճարման հանձնարարականը Բանկ ներկայացնելու դեպքում	Վճարման հանձնարարականը հեռահար սպասարկման համակարգերով ներկայացնելու դեպքում
2.1.1	«Այդի Բանկ» ՓԲԸ հաճախորդների միջև ՀՀ դրամով և արտարժույթով փոխանցումներ (Այդի Բանկի համակարգում)	անվճար	
2.1.2	ՀՀ դրամով փոխանցումներ այլ ՀՀ բանկեր և ՀՀ պետ. բյուջե	500	անվճար
2.1.3	ՀՀ դրամով շտապ փոխանցումներ այլ ՀՀ բանկեր ՀՀ պետ. բյուջե[10]	0.1%, նվազագույնը 1000, առավելագույնը 10,000	

[8] Ուշադրություն՝ Հաճախորդի հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանա հաճախորդը՝ իր կողմից դրամական միջոցների հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում: Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգը կարող եք գտնել հետևյալ հղմամբ՝ Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկ:

[9] Բանկը՝ համաձայն Բանկում առկա տեղեկագրերի, կարող է ինքնուրույն, առանց հաճախորդի նախնական համաձայնության ընտրել միջոցների փոխանցման ճանապարհը /միջնորդ բանկին/ այն դեպքում, երբ փոխանցման ամբողջական ճանապարհը /միջնորդ բանկը/ նշված չէ հաճախորդի կողմից ներկայացված վճարման հանձնարարականում: ՌԴ ռուբլով և որոշ այլ արժույթներով փոխանցումների դեպքում փոխանցման հանձնարարականը պետք է պարունակի տվյալ երկրի օրենսդրությամբ պահանջվող կոդավորումը (առկայության դեպքում):
Բանկը կարող է կասեցնել կամ մերժել փոխանցումը՝ գործարքին առնչվող անհրաժեշտ բավարար տեղեկություններ/փաստաթղթեր չներկայացնելու դեպքում, թղթակից բանկերի պահանջներից ելնելով, ՀՀ օրենսդրությամբ կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում
2,2,3, և 2,3 բաժիններում նշված ծառայությունների սակագները ներառում են Բանկի թղթակից բանկերի միջնորդավճարները: Երրորդ բանկերի ծախսերը, առկայության դեպքում, Բանկի կողմից վճարված գումարի չափով գանձվում են հաճախորդից լրացուցիչ:
Բանկից անկախ պատճառներով հանձնարարականի կատարման արդյունքի անբավարարության դեպքում, վճարված միջնորդավճարի գումարը ենթակա չէ հետ վերադարձման:

[10] Շտապ պայմանով փոխանցումները կատարվում են Կանոններով սահմանված ժամերին և կարգով:

2.1.4	ԱՄՆ դոլարով և Եվրոյով փոխանցումներ այլ ՀՀ բանկեր[11]	0.12%, նվազագույնը՝ 2,000, առավելագույնը՝ 20,000	0.1%,նվազագույնը՝ 2,000, առավելագույնը՝ 20,000
2.2	**Արտարժույթով փոխանցումներ**		
			Վճարման հանձնարարականի ներկայացման եղանակ
		Վճարման հանձնարարականը Բանկ ներկայացնելու դեպքում	Վճարման հանձնարարականը հեռահար սպասարկման համակարգերով ներկայացնելու դեպքում
2.2.1	**ԱՄՆ դոլարով, Եվրոյով**		
2.2.1.1	***OUR* տարբերակով** *Վճարման հանձնարարականի կատարման հետ կապված ծախսերը կրում է փոխանցող հաճախորդը*	0.2%, նվազագույնը՝ 10,000, առավելագույնը՝ 75,000	0.18%, նվազագույնը՝ 10,000, առավելագույնը՝ 75,000
2.2.1.2	*Guaranteed OUR* ***տարբերակով*** *Այս տարբերակն ընտրելու դեպքում գումարը շահառուին կհասնի ամբողջությամբ*	**ԱՄՆ դոլարի դեպքում՝** ի հավելումն 2.2.1.1 կետի գանձվում է՝ 15,000	
		Եվրոյի դեպքում՝	
		մինչև 12,500 **եվրո** ներառյալ՝ 13,000	մինչև 12,500 **եվրո** ներառյալ՝ 11,000
		12,500 **եվրոն** գերազանցելու դեպքում	
		0.2%, նվազագույնը՝ 15,000, առավելագույնը՝ 75,000	0.18%, նվազագույնը՝ 15,000, առավելագույնը՝ 75,000
2.2.1.3	BEN/SHA ***տարբերակով*** *Վճարման հանձնարարականի կատարման հետ կապված երրորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից*	6000	5000
2.2.2	**ՌԴ ռուբլով, լարիով**		
2.2.2.1	*Կատարվում է միայն* OUR **տարբերակով**, *ընդ որում գումարը շահառուին կհասնի ամբողջությամբ*	0.05%, նվազագույնը՝ 3,000, առավելագույնը՝ 20,000	0.04%, նվազագույնը՝ 3,000, առավելագույնը՝ 20,000
2.2.3	**Բանկի համար ընդունելի այլ արժույթով**		

[11] Արտասահմանյան միջնորդ բանկերի միջոցով ՀՀ այլ բանկեր ուղարկվող, ինչպես նաև այլ արտարժույթով փոխանցումներն իրականացվում են համաձայն 2.2 կետի

2.2.3.1	***OUR տարբերակով*** *Վճարման հանձնարարականի կատարման հետ կապված ծախսերը կրում է փոխանցում կատարող հաճախորդը*	0.2%, նվազագույնը՝ 15,000, առավելագույնը՝ 80,000	0.18%, նվազագույնը՝ 15,000, առավելագույնը՝ 80,000
2.3	**Հաճախորդի դիմումի համաձայն վճարման հանձնարարականի հետ կանչման կամ վճարային վավերապայմանների փոփոխման հանձնարարականի կատարում, հարցումների իրականացում**		
2.3.1	ՀՀ դրամով		1,000
2.3.2	ՌԴ ռուբլով, լարիով		10,000
2.3.3	Այլ արտարժույթով		
2.3.3.1	մինչև 1 տարի վաղեմություն ունեցող վճարման հանձնարարականների դեպքում		30,000
2.3.3.2	1 տարուց ավել վաղեմություն ունեցող վճարման հանձնարարականների դեպքում		125,000
2.4	**Հաճախորդի կողմից թերի կամ սխալ ներկայացված տվյալների արդյունքում փոխանցման հետ վերադարձ թղթակից բանկի կողմից**		
2.4.1	ՀՀ դրամով		1000
2.4.2	ՌԴ ռուբլով, լարիով		10,000
2.4.3	Այլ արտարժույթով		20,000
2.5	**SWIFT հաղորդագրության կրկնօրինակի տրամադրում**		3,000
2.6	**Արտարժույթով ստացված չպարզաբանված գումարների վերադարձ՝ ներքին ակտերի համաձայն կամ ուղարկող բանկի պահանջով**		
2.6.1	ՌԴ ռուբլով		1000
2.6.2	Այլ արտարժույթով[12]		
2.6.2.1	Մինչև 500 ԱՄՆ դոլար կամ համարժեք այլ արժույթ		5,000
2.6.2.2	500 և ավելի ԱՄՆ դոլար կամ համարժեք այլ արժույթ		15,000

3	ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄՈՎ ԵՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ		**ՍԱԿԱԳԻՆԸ ՀՀ ԴՐԱՄ**
3.1	**Կանխիկ արտարժույթի առքուվաճառք, փոխանակում**	
3.1.1	Շրջանառության համար պիտանի դրամանիշների դեպքում	համաձայն տվյալ օրվա դրությամբ Բանկի կողմից կանխիկ գնանշվող արժույթների համար սահմանված փոխարժեքի
3.1.2	ԱՄՆ դոլարի, եվրոյի, ՌԴ ռուբլու հնամաշ դրամանիշների դեպքում	3%
3.2	**Կանխիկ արտարժույթի հաշվում, իսկության ստուգում, մեկ այլ անվանական արժեքի դրամանիշի հետ փոխանակում**	
3.2.1	Մինչև 300 ԱՄՆ դոլարը կամ 300 եվրոն կամ 20,000 ՌԴ ռուբլին ներառյալ կամ 300 ԱՄՆ դոլարին համարժեք Բանկի կողմից կանխիկով ընդունվող և գնանշված այլ արտարժույթի դեպքում	անվճար
3.2.2	300 ԱՄՆ դոլարը կամ 300 եվրոն կամ 20,000 ՌԴ ռուբլին կամ 300 ԱՄՆ դոլարին համարժեք Բանկի կողմից կանխիկով	0.1%, նվազագույնը 1,000 առավելագույնը 100,000

[12] Գանձվում է վերադարձվող գումարից՝ համարժեք արժույթով:

	ընդունվող և գնանշված այլ արտարժույթը գերազանցելու դեպքում	
3.3	**Կանխիկ դրամական միջոցների տրամադրում Բանկի POS-տերմինալներով՝ ՀՀ-ից դուրս թողարկված քարտերի միջոցով**	5%

4	**ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԻՆԿԱՍՈ**[13]	
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ		**ՍԱԿԱԳԻՆԸ ՀՀ ԴՐԱՄ**
4.1	**Արտահանման ինկասո**	
4.1.1	Ինկասո հանձնարարականի թողարկում, փաստաթղթերի ընդունում և ուղարկում	0.2% նվազագույնը՝ 50,000
4.1.2	Ինկասոյի պայմանների փոփոխություն կամ չեղարկում	25,000
4.2	**Ներմուծման ինկասո**	
4.2.1	Ինկասո հանձնարարականի և յուրաքանչյուր փոփոխության ծանուցում	25,000
4.2.2	Ինկասո հանձնարարականի վճարում/ակցեպտավորում	0.1% նվազագույնը 6,000 առավելագույնը 45,000
4.2.3	Փաստաթղթերի տրամադրում հաճախորդին	անվճար
4.2.4	Ինկասո ներկայացված, բայց հաճախորդի կողմից չվճարված փաստաթղթերի վերադարձ	50,000

5	**ՓՈԽԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ		**ՍԱԿԱԳԻՆԸ ՀՀ ԴՐԱՄ**
5.1	Ներբանկային փոխարկումներ	Ըստ պայմանագրի կամ Բանկի փոխարժեքի

6	**ՀԵՌԱՎԱՐ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ**	
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ		**ՍԱԿԱԳԻՆԸ ՀՀ ԴՐԱՄ**
6.1	IDBusiness/**Բանկ-հաճախորդ համակարգի միացում**	անվճար
6.1.1	Գործարքներ կատարելու իրավասության տրամադրում	անվճար
6.1.2	Գործարքների վերաբերյալ տեղեկատվության դիտման, այդ թվում՝ գործարքի հետ առնչվող գործողությունների իրականացման իրավասության տրամադրում	անվճար
6.2	IDBusiness.am **առցանց հարթակի հասանելիության տրամադրում**	անվճար
6.2.1	Գործարքներ կատարելու իրավասության տրամադրում	անվճար
6.2.2	Գործարքների վերաբերյալ տեղեկատվության դիտման, այդ թվում՝ գործարքի հետ առնչվող գործողությունների իրականացման իրավասության տրամադրում	անվճար
6.3	**IDBusiness Mobile հավելվածի ներբեռնում**	անվճար

13 Երրորդ բանկերի միջնորդավճարները, փոստային և կապի ծախսերը գանձվում են հաճախորդից լրացուցիչ՝ ըստ դրանց փաստացի մեծության:

6.3.1	Գործարքներ կատարելու իրավասության տրամադրում	անվճար
6.3.2	Գործարքների վերաբերյալ տեղեկատվության դիտման, այդ թվում՝ գործարքի հետ առնչվող գործողությունների իրականացման իրավասության տրամադրում	անվճար

7	ՊԱՀԱՏԵՂԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ		**ՍԱԿԱԳԻՆԸ**
7.1	Պահատեղի վարձակալություն	**Համաձայն ֆիզիկական անձանց համար սահմանված սակագնի՝ հետևյալ հղումով**
7.2	Պետական մարմինների կողմից իրականացվող գործառույթներ	

8	ՎԱՐԿԵՐԻ/ԳՐԱՎՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ[14]	
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ		**ՍԱԿԱԳԻՆԸ ՀՀ ԴՐԱՄ (ներառյալ ԱԱՀ)**
8.1	Գրավադրված անշարժ գույքի հասցեում ֆիզիկական անձի հաշվառման թույլտվության տրամադրում (անկախ հաշվառվողների քանակից)	Յուրաքանչյուր անգամ՝ 3,000
8.2	Գրավադրված գույքի սեփականության վկայականում փոփոխություններ կատարելու թույլտվության տրամադրում, բացառությամբ ժառանգության ճանաչման հետևանքով առաջացած փոփոխությունների	10,000
8.3	Գրավադրված անշարժ և շարժական գույքը վարձակալության հանձնելու թույլտվության տրամադրում	10,000
8.4	Գրավադրված ավտոմեքենայի հաշվառման համարանիշի փոփոխություն կատարելու թույլտվության տրամադրում	5,000
8.5	Գրավադրված գույքի մասնակի ազատման կամ գրավադրված գույքի փոփոխություն կատարելու թույլտվության տրամադրում, բացառությամբ ոսկու, դրամական միջոցների և Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի գրավով վարկերի և այն դեպքերի, երբ գրավը փոխարինվում է՝	Յուրաքանչյուր գրավային պայմանագրի փոփոխության համար՝ 30,000
8.5.1	Ոսկյա իրերի կամ ոսկու ստանդարտացված ձուլակտորների գրավով	անվճար
8.5.2	Դրամական միջոցների/դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունքի գրավով	
8.5.3	Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի գրավով	
8.6	Գրավադրված գույքի վերաբերյալ գրությունների տրամադրում	Յուրաքանչյուր գրավային պայմանագրի համար՝ անշարժ գույքի դեպքում՝ 10,000 շարժական գույքի դեպքում՝ 5,000

14 Սույն բաժնում սահմանված սակագները չեն տարածվում այն հաճախորդների վրա, որոնք համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի համարվում են խնդրահարույց:

8.7	Վարկի պայմանների վերանայում	վարկի մնացորդի 1% չափով, սակայն ոչ պակաս, քան 20,000 դրամ և ոչ ավել քան 150,000 դրամ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. **Հաշիվների սպասարկման սակագնի կիրառման կարգ**. Սակագինը կիրառելի չէ Բանկի այն հաճախորդների համար, որոնց հաշիվները մինչև սույն տեղեկատվական ամփոփագրի գործողության մեջ դրվելու օրը սպասարկվել են անհատական սակագնով՝ կնքված պայմանագրի/համաձայնագրի համաձայն:
2. Սույն սակագները հաճախորդի համար կիրառելի են այնքանով, որքանով չեն հակասում հաճախորդի հետ կնքված պայմանագրի/համաձայնագրի դրույթներին կամ առկա է հաճախորդի բանկային հաշվի սպասարկման պայմանների և սակագների մասին այլ որոշում:
3. Երկքաղաքացիություն ունեցող Անհատ ձեռնարկատեր հաճախորդների, ինչպես նաև իրավաբանական անձ հաճախորդի՝ երկքաղաքացիություն ունեցող մասնակիցների դեպքում, Հաճախորդի նույնականացման համար հիմք է ընդունվում ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված քաղվածքում գրանցված անհատ ձեռնարկատեր հաճախորդի, իսկ իրավաբանական անձ հաճախորդի դեպքում՝ վերջինիս մասնակիցների՝ անձը հաստատող փաստաթուղթը (եթե անձը գրանցված է օտարերկրյա անձնագրով, ապա անձը դիտարկվում է որպես օտարերկրյա քաղաքացի):
4. Բանկային հաշիվների բացման, վարման և դրամարկղային սպասարկման վերաբերյալ կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Իրավաբանական անձանց և Անհատ ձեռնարկատերերի Բանկային հաշիվների բացման և սպասարկման կանոններով (այսուհետ՝ Կանոններ) և համապատասխան պայմանագրով/համաձայնագրով:
5. Կանոնները հանդիսանում են սույն տեղեկատվական ամփոփագրի անբաժանելի մասը:
6. Բանկը բացում և սպասարկում է ընթացիկ հաշիվներ Բանկի համար ընդունելի արժույթներով: Ընդունելի արժույթների ցանկը տես հղումով ընդ որում արտարժույթով ընթացիկ բանկային հաշիվը Բանկը բացում և սպասարկում է միայն՝ Բանկում ՀՀ դրամով ընթացիկ բանկային հաշիվ ունեցող հաճախորդների համար:
7. Ընթացիկ հաշիվը բացվում է անժամկետ, ընդ որում ընթացիկ հաշիվ բացելու նախապայման է հանդիսանում Հաճախորդի էլեկտրոնային հասցեի առկայությունը:
8. Առանձին ծառայությունների գծով սույն տեղեկատվական ամփոփագրում չներառված պայմանները և սակագները կարգավորվում են առանձին տեղեկատվական ամփոփագրերով և/կամ պայմանագրերով/համաձայնագրերով:
9. Բանկը յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանում է արտարժույթի առքուվաճառքի փոխարժեքներ, որոնք գործում են Բանկի աշխատանքային ժամերին: Հաճախորդների հեռավար սպասարկման ընթացքում աշխատանքային ժամերից դուրս, ինչպես նաև ոչ աշխատանքային օրերին (այդ թվում նաև շաբաթ օրերին) գործում է Բանկի պաշտոնական կայքում առկա արտարժույթի առքուվաճառքի փոխարժեքները:
10. Բանկը կարող է կասեցնել կամ մերժել փոխանցումը՝ գործարքին առնչվող անհրաժեշտ բավարար տեղեկություններ/փաստաթղթեր չներկայացնելու դեպքում, թղթակից բանկերի պահանջներից ելնելով, ՀՀ օրենսդրությամբ կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում:
11. Բանկը «Փողերի լվացման *և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:*
12. *Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար, ինչպես նաև՝ ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) Միասնական հաշվետվողական ստանդարտով նախատեսված կարգով օտարերկրյա հարկային ռեզիդենտ հանդիսացող հաճախորդի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ ՊԵԿ տրամադրելու համար Բանկը կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:*
13. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ **Մասնաճյուղեր և Բանկոմատներ:**
14. IDBusiness mobile հավելվածի միջոցով Բանկի հեռահար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են **«Հեռահար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»:**
15. Հաշվում առկա միջոցների վերադարձելիությունը երաշխավորվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն (Կետը կիրառելի է Անհատ ձեռնարկատեր հաճախորդների դեպքում):

<table>
<tr><td colspan="4">«Այդի Բանկ» ՓԲԸ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝</td><td></td></tr>
<tr><td rowspan="2">Ավանդի արժութային կառուցվածքը</td><td rowspan="2">Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ</td><td rowspan="2">Եթե նույն բանկում ունեք միայն արտարժու-թային ավանդ</td><td colspan="2">Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ</td></tr>
<tr><td>Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է</td><td>Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է</td></tr>
<tr><td>Ավանդի երաշխավորման առավելագույն չափը</td><td>16 միլիոն ՀՀ դրամ</td><td>7 միլիոն ՀՀ դրամ</td><td>16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)</td><td>7միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)</td></tr>
</table>

16. Բանկային հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ հղումով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ